




Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՐՔԸ

«Էջմիածին» ամսագրի փետրվար համարում (էջ 34) հրատարակում ենք **Ներսես Շնորհալու** 1168 թվականին հունաց Կիո Էմմանվել կաշարին գրած «Մահմանք հառատոյ Հայաստանեայց եկեղեցոյ» դավանաբանական թղթի գրաբար բնագիրը և արեւելահայերեն արդի գրական լեզվով թարգմանությունը՝ գոհացում տալու համար մեր ընթերցողներից շատերի հետաքրքրությանը, որոնք, խմբագրությանն ուղղած իրենց նամակներում, խնդրում են յուսարանություն տալ հետևյալ հարցի մասին.

Ի՞նչ է միաբնակությունը և ի՞նչ՝ երկաբնակությունը: Հայ եկեղեցին միաբնակ է, թե՛ երկաբնակ:

Սկզբից ևեթ ասենք, որ խմբագրությանն նպատակը չէ հավատի հարցեր քրքրել, բլուզանդական հին վեճեր հուզել, այլ միայն ծանոթություններ և յուսարանություններ տալ մեր ընթերցողներին՝ նրանց հետաքրքրող հարցերի մասին, ասել ճշմարտությունը մեր եկեղեցու և նրա դավանության մասին: Արդարև, «ա՛յլ է կրոնական վեճը, այլ է կրոնական խնդրի պատմագիտական հետազոտությունը» (Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյան, «Արարատ», 1898, էջ 207):

Դժբախտաբար մինչև հիմա էլ և՛ մտավորականության, և՛ ընթերցողներից ու նաև բոլոր եկեղեցիներից ոմանց և օտարների մոտ, երբեմն կան թյուր և սխալ կարծիք-

ներ Քրիստոսի բնությանց վարդապետության վերաբերյալ հայ եկեղեցու դիրքի մասին:

Հայ եկեղեցին Արևելքի հնագույն և պատմական եկեղեցիներից մեկն է, բնդհանրական և առաքելական եկեղեցու ճրջմարիտ մեկ անդամը, որի դավանությունը խարսխվել է Աստվածաշնչի, ավանդության (առաքելական և եկեղեցական) և առաջին երեք Տիեզերական ժողովների՝ Նիկիայի (325 թ.), Կ. Պոլսի (381 թ.) և Եփեսոսի (431 թ.) դավանության և եկեղեցական վարդապետության վրա, որից նա հետագայում երբեք չի շեղվել:

Առաջին երեք Տիեզերական ժողովներում քննվեցին և սահմանվեցին վերջնականապես ս. Երրորդության, Մարդեղության և Փրկագործության վերաբերյալ դավանաբանական, քրիստոսաբանական, հիմնական հավատալիքները:

Երրորդ Տիեզերական ժողովը Եփեսոսում, 431 թ., մասնավոր կարևորությամբ քննության առավ մանավանդ Քրիստոսի անձի մեջ **աստվածային և մարդկային բնությունների միավորության հարցը** և ընդունեց հետևյալ բանաձևը. **Մի է բնութիւն Բանին Մարմնացելոյ.** այսինքն Քրիստոսի մեջ աստվածային և մարդկային բնությունները միացած են, անխառն և անշփոթ միավորությամբ, և կազմում «մի անձ, մի դէմ,

և միատրեալ մի բնութիւն» (Ժամագիրք, Վաղարշապատ, 1902, էջ 2):

«Մի է բնութիւն Բանին Մարմնացելոյ» բանաձևը կոչվում է կյուրեղյան կամ Եփեսոսյան դավանություն, ուղղափառ միաբնականության դավանություն, որն ընդունվել է 431 թվականին Եփեսոսի ժողովում և ըստ որի Քրիստոսի աստվածության և մարդկային բնության միջև կատարյալ միավորություն է պաշտպանվում:

Սույն դավանությունը, սակայն, հետագայում Եվտիքեսի մոլորության պատճառով, վերաբնության ենթարկվեց մի ավելորդ անգամ 451 թվականին Քաղկեդոնի ժողովում: Եվտիքեսի վարդապետությունը Քրիստոսին վերագրում էր երկու բնությունների շփոթություն և խառնակություն (Օրմանյան, Հայոց եկեղեցի, էջ 106): Եվտիքեսը Քրիստոսի մեջ միանգամայն ոչնչացած էր համարում մարդկային բնությունը, «ինչպես ջրի մի կաթիլ» օվկիանոսում: Այս վարդապետությունն էլ կոչվեց մոնոֆիզիտիզմ, (մոնո հունարեն նշանակում է մի, մեկ, ֆիզիս՝ բնություն):

Քաղկեդոնի ժողովը դատապարտեց Եվտիքեսին և նոր բանաձև ընդունեց:

Քաղկեդոնի ժողովում ընդունված նոր բանաձևը շեշտը դնում էր ոչ թե բնությունների միավորության, ինչպես ընդունվել էր Եփեսոսի ժողովում (յերկուց բնութեանց մի), այլ «Մի Անձն յերկուս բնութիւնս» և կամ «երկու բնութիւն ի միում անձնատրութեան» բացատրության վրա, որով «Քրիստոսի աստվածության և մարդկության մեջ կերպով մը բաժանում կամ անջատում կենթադրվեր» (Օրմանյան, Հայոց եկեղեցի, էջ 41):

Այս նոր վարդապետության կողմնակիցներն էլ կոչվեցին երկաբնակներ և նրանց դավանությունը՝ երկաբնակություն:

Հայ եկեղեցին 431 թվականից ի վեր հավատարիմ և «անդրդվելի» է մնացել Եփեսոսյան դավանության (Օրմանյան, Հայոց եկեղեցի, էջ 50):

«Հայոց եկեղեցու դավանությունը եղել է ստացին երեք Տիեզերական ժողովների» (Մանուկ Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Երևան, Ա. հատոր, 1944, էջ 613, 615, 616):

Քաղկեդոնականները սովորաբար նույնացնում են եվտիքական մոնոֆիզիտիզմը, կամ եվտիքական միաբնակությունը ուղղափառ միաբնակության հետ: Դա ճիշտ չէ: Ուղղափառ միաբնակ եկեղեցիները և այդ թվում հայ եկեղեցին պաշտոնապես և հանդիսավորապես մերժում են եվտիքականությունը որպես մոլորություն, Օձնեցու բառերով՝ «Եվտիքեսի միաբնակություն» (Օձնեցի,

«Շատ ընդդէմ երևութականաց»): Այս մասին տես «Մաշտոց, ձեռնարկութեան», Վաղարշապատ, 1871, էջ 31:

Հայ եկեղեցու հայրապետները և դավանաբան վարդապետները Նիկիական հանգանակի վրա կազմել են մի ուրիշ հանգանակ ևս՝ մասնավոր մտքով, որպեսզի մի անգամ ընդմիջտ բացառվի եվտիքականության մեղադրանքը մեր եկեղեցու հասցեին (Ժամագիրք, էջ 2): «Բացատրական այս բանաձևը,—գրում է Օրմանյան սրբագանք,—հարկ եղավ կազմել, որպեսզի հերքվի եվտիքականության գրաբարությունը, որ կանոնիսն հայոց եկեղեցվո դեմ հորինվեցավ անխորհուրդ պարզամտությամբ, եթե կամավոր չարամտությամբ չէ» (Օրմանյան, Հայոց եկեղեցի, էջ 106):

Մեր եկեղեցական հին մատենագրությունը չափազանց հարուստ է հայ եկեղեցու քրիստոսաբանական դիրքի վերաբերյալ անկրկնելի գոհար էջերով, որոնց «թվումն մասանցն» իսկ հարյուրավոր էջեր կկարեն ձեզանից:

«Մենք կասենք ու կկրկենք,—գրում է հմուտ աստվածաբան և Մայր Աթոռի միաբան տ. Կարապետ Տ. վրդ. Տեր-Մկրտչյանը,—որ զուտ պատմական սխալ է միայն, թեև շատ տարածված սխալ, կարծել թե, «մի բնութիւն» դավանելը նույնն է, ինչ որ միաբնակ լինելը: Եթե Կյուրեղ Աղեքսանդրացին Քաղկեդոնի ժողովում իբրև ուղղափառ ճանաչված լինելով նույն վարդապետությունը ունի, ինչ որ այդ ժողովը, ուրեմն մեր եկեղեցին «մի բնութիւն» դավանելով նույն իմաստով, ինչ որ Կյուրեղ, կա՛մ միաբնակ պետք է համարվի ըստ **Բառի**, կա՛մ երկաբնակ՝ ըստ **Փաղափարի**» («Արարատ», 1896, էջ 156):

Հայ եկեղեցու դեմ քաղկեդոնականների մղած պայքարը, կրոնական անհանդուրժողությունը անցյալում կրում էին նաև ազգային ճնշման բնույթ: Մեր ժողովրդի մոտ դրա արդյունքն այն եղավ, որ հայության սրտում առաջացրեց ազգային ինքնապաշտպանության գիտակցություն և վճռականություն ամրապինդ փարվելու նախաքաղկեդոնյան ուղղափառ դավանության: Անանիա Շիրակացին իր «Ի յայտնութիւն Տեառն» ճառում գրում էր քաղկեդոնականների մասին. «սառնեզ այլ ոչինչ ունիմք պատասխանի, զի ոչ հրամայէք գործ ճշմարտութեան, այլ միշտ իշխանութեան ու բռնութեան»:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, 1968 թվականի մայիսի 1-ին Նյու-Յորքում, ԱՄՆ-ի հայ հոգևորականության տարեկան համագումարում կարդացած Իր պատմական ու բովանդակային ճառում հաստատում էր.

«Հայ եկեղեցին ու ժողովուրդը դարեր շարունակ պաշտպանեցին իրենց հոգևոր ու ազգային ինքնությունը և անկախությունը քրիստոնեությամբ՝ ընդդեմ Պարսկաստանի և Քաղկեդոնը մերժելով՝ ընդդեմ Բյուզանդիոնի»:

Անգիտություն է, քաղկեդոնական հարցեր քննարկել ու հասկնալ փորձել միմիայն աստվածաբանական տեսակետներն» (Վազգեն Ա Հայրապետ Հայոց, Գիրք երկրորդ, ս. Էջմիածին, 1968, էջ 213):

Հայ եկեղեցու յուրաքանչյուր հավատացյալ պետք է իմանա, թե ե՞րբ և ի՞նչ հանգամանքներում հայ եկեղեցին ստիպված է եղել բաժանվել Քաղկեդոնից այս կողմ և «իր մաքառումն սկսել յուր ինքնուրույնությունն ապահովելու և ձևակերպելու համար և այնքան տառապանք է կրել, արյուն ու արցունք է թափել այս կամ այն դավանու-

թյան կետը պաշտպանելու» («Արարատ», 1898, էջ 202):

Ընդհանրական եկեղեցու բաժանումից հետո, Քաղկեդոնից այս կողմ, 14 դարեր են անցել և դավանական այնքան վեճերից, պայքարներից հետո էլ ողորդափառ միաբնակներն ու երկաթնակները մնացել են իրենց դավանաբանական դիրքերի վրա:

Մեր օրերում, սակայն, այդ դիրքերը այլևս բնավ պատճառ չեն, միջեկեղեցական անհամդուրժողականության, վեճերի և կամ ոչ բարեկամական արտահայտությունների: Այսօր եկեղեցիները, պահելով ամեն մեկը իր ավանդական կեցվածքն ու աստվածաբանական մտածողությունը, եղբայրորեն կողք-կողքի են գալիս, միասին աղոթում և գործում, միության ոգով Քրիստոսի սիրույն մեջ:

